որ զգույշ առաջ է գալիս շուրջի իրարանցումի միջով: Դա մի մասսաժիստ է, որ իր սուլոցով իր անցնելն է յայտնում:

Այդ արուեստը Ճապոնում անյիշելի ժամանակներից կոյրերի մենաշնորհն է կազմում:

⁂

Տները մասնաւորապէս հետաքրքիր են նրանով, որ դրսի պատ չունենալով անցորդին միջոց են տալիս ճապոնացու նիստն ու կացը կատարելապէս ուսումնասիրելու եւ բաց են անում ընորոշ տեսարանների մի ամբողջ շարք:

Ամեն մի տուն կարծես մի շրջանակ լինի, որի մէջ պարզ ցուցադրւած են նրանց բնակիչների կեանքն ու աշխատանքը:

Ահա այստեղ բոլորովին ճաղատ մի ճապոնացի շրջապատւած թղթէ լապտերների ու հովանոցների մի ամբողջ կոյտով՝ մեծ հոգածութեամբ նկարում է: Մի անսովոր լրջութիւն կայ նրա դէմքին: Այն բարեսիրտ ու միամիտ կենտրոնացումը, որով կատարում է նա իր աշխատանքը քեզ ակամայ երեխայ է յիշեցնում:

Կից խանութում մետաքս են ծախում. պատերին կախւած են կտորներ քմահաճ նկարներով: Գործավար ճապոնուհիները մէկը միւսի ետեւից բաց են անում յաճախորդի առաջ մետաքսի նեղ փաթեթները, մինչ տէրը, չոք նստած իր մանրիկ սեղանի առջեւ, բոլորվին խորասուզւել է հաշիւների մէջ:

Մի քիչ դէնը մոմ են պատրաստում. խանութի մեծ մասը բռնում է կանաչ հեղուկով լիքը տաշտը, որի մէջ թաթախում են անդադար փոքր կլոր փայտեր. չորացնում են, թաթախում նորից. եւ այսպէս մի քանի անգամ, մինչեւ մոմը պատրաստ լինի: